

## Դիտարկումներ և առաջարկություններ

### «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու վերաբերյալ

2025 թվականի փետրվարի 6-ին Իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տեղադրվել է «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը<sup>1</sup>: Նախագծի որոշ դրույթներ խնդրահարույց են, ինչի վերաբերյալ դիտարկումները ներկայացվում են ստորև.

Նշված նախագծով առաջարկվում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի վերջում ավելացնել հետևյալ նախադասությունը. *«Անկանխիկ գործարքներ իրականացնելիս կարող են սահմանվել գործարքի իրականացման հավելյալ պայմաններ, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ»:*

Որպես կատարվող փոփոխության հակիրճ հիմնավորում հեղինակը նշել է, որ *«սույն կարգավորմամբ հնարավորություն կընձեռնվի շուկայի բուլսը մասնակիցների համար սահմանել հավասար և արդար պայմաններ, կնվազեցվի վերահսկող մարմինների կողմից ստուգումների իրականացումը՝ այդպիսով կանխարգելելով խախտումների իրականացումը, ինչպես նաև բուլլ կտա ստանալ հեզրիտ և ամբողջական տվյալներ, մասնավորապես՝ բժշկական հաստատությունների կողմից համապատասխան բժշկական տվյալների մուտքագրում էլեկտրոնային առողջապահական համակարգ, որը հնարավորություն կտա ցանկացած պահի դրությամբ ունենալ հավաստի տեղեկատվություն ՀՀ առողջապահական համակարգում մատուցված ծառայությունների ֆանակական և որակական ցուցանիշների վերաբերյալ՝ անկախ բժշկական ծառայությունների մատուցման համար ֆինանսավորման աղբյուրից, որի շնորհիվ կձևավորվի հեզրիտ վիճակագրություն, կնվազեցվի հավելյալ հետազոտությունների, կրկնակի բուժումների, նշանակումների և բժշկական սխալների ֆանակը՝ նվազեցնելով առողջապահական ծախսերը, և միարժամանակ ֆազաճացու վերաբերյալ ունենալ ամբողջական առողջապահական տվյալներ:»*

Տվյալ նախագծի վերաբերյալ առկա է մի քանի դիտարկում, որոնք վերաբերում են նախագծի հեղինակին, հիմնավորվածությանն ու որոշակիությանը և բժշկական գաղտնիքի պահպանմանը:

**1. Նախագծի հեղինակը.** Համաձայն e-draft.am կայքէջի ֆինանսավորող նախագծի հեղինակը հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարությունը: Հարկ է նշել, որ նախագծի հիմնավորման մեջ, ի թիվս այլնի, նշվում է, որ նախագիծը կապված է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «4.5 Առողջապահություն», «6.8 Հարկաբյուջետային ֆազաճացում» և «6.9 Հարկային և մաքսային վարչարարություն» բաժիններին:

<sup>1</sup> <https://www.e-draft.am/projects/8285/about>

Միաժամանակ յուրաքանչյուր նախարարության լիազորությունների շրջանակը սահմանվում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածով: Համաձայն դրա՝ նշված ոլորտներում ֆողոկալության մշակումը պատկանում է Առողջապահության նախարարության և Ֆինանսների նախարարությանը: Գտնում ենք, որ նշված նախագծի մշակումը չի բխում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի և Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի դրույթներից և դուրս է Պաշտպանության նախարարության գործառնություններից:

**2. Հիմնավորվածություն և որոշակիություն.** Նախագծով առաջարկվող փոփոխության տեխստը բավականին ընդհանրական է գրված և հիմնավորման նպատակի համեմատ շատ լայն է: Ըստ նախագծի հիմնավորման փոփոխությամբ առաջարկվող նպատակը առողջապահության ոլորտում կատարվող վնասումների համար որոշակի հսկողություն սահմանելն է՝ կատարվող վնասումների վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, լրացուցիչ տվյալներ ստանալու եղանակով: Սակայն օրենքի փոփոխության նախագծի մեջ դա հստակ նշված չէ և հետագայում Կառավարությունը կարող է վնասային ֆարտերով այլ ոլորտներում կատարվող վնասումների վերաբերյալ ստացվող տեղեկատվության ստացման կարգ սահմանել:

**3. Բժշկական գաղտնիքի պահպանումը.** Առաջարկվող կարգավորումը որոշակի առումով կարող է առաջացնել անձնական տվյալների, մասնավորապես՝ բժշկական գաղտնիք կազմող տվյալների լրացուցիչ միջամտության հավանականություն: Ներկա պահին պետությունը տեղեկատվություն ստանում է այն բժշկական ծառայությունների վերաբերյալ, որոնք կատարվում են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի շրջանակում: Առաջարկվող կարգավորումից հետո, եթե Կառավարությունը սահմանի լրացուցիչ տվյալների ցանկ, կստացվի, որ ցանկացած բժշկական ծառայության համար անկանխիկ վնասում կատարելիս, պետությունը կարող է ստանալ տվյալ թե բանկային հաշվեհամարի տերը որ բուժիաստատությունում ինչ բժշկական սպասարկում է ստացել: Այսինքն՝ անձի սեփական միջոցներով կատարված բժշկական սպասարկման մանրամասները հայտնի են դառնում նաև այլ շրջանակի, ինչը համարվում է օրենքով և այլ իրավական ակտերով պաշտպանվող տվյալների լրացուցիչ հավաքագրում ու իրավունքների միջամտություն:

**Առաջարկում ենք դադարեցնել օրենքի նախագծի ֆինանսումը, տվյալ իրավական ակտի անհրաժեշտությունը ֆինանսել Առողջապահության նախարարության հետ և հրաժարվել այն կարգավորումներից, որոնք կարող են անհամաչափ միջամտություն պարունակել անձնական և բժշկական գաղտնիքի հավաքագրման և օգտագործման տեսանկյունից:**

«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ